ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«07» հուլիս 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

Ս. Անանյան

ԳԲԽ-70/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 20.06.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Նոր-Էներջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Նոր-Էներջի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 20.06.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/1» ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2016թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ Ընկերության (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում)) հայտը մերժվել է հետևյալ հիմնավորմամբ. ««Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))-ի անվան մեջ նշված չէ կոնսորցիումի մյուս անդամի անվանումը, ինչը թույլ չի տալիս տեսնել կոնսորցիումի կողմ հանդիսացող մյուս անդամի անվանումը: Մասնակցի հայտում ներառված չէ համատեղ գործունեության պայմանագիր, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետ 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ, սույն Ընթացակարգի հրավերի I մասի 4-րդ կետի 4.3 ենթակետի «է» պարբերությամբ, ինչպես նաև հրավերի II մասի 2-րդ կետի 2.2.9 ենթակետով սահմանված պահանջներին: Մասնակցի հայտի գնահատման ժամանակ հնարավոր չէ կիրառել Կարգի 35-րդ կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերությամբ և սույն Ընթացակարգի հրավերի I մասի 7-րդ կետի 7.5.2 ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանված պահանջները և այլն»:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը կայացվել են օրենքի խախտումներով, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից:

Ըստ Ընկերության՝ խախտվել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, Կարգի 74-րդ կետի 45-րդ կետերը և այլն:

Ընկերությունը վկայակոչել է Կարգի 45-րդ կետը, որի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ճիշտ չի կատարել գործողությունները, որի հետևանքով ճիշտ չի գնահատել «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Հանձնաժողովի գործողությունների ոչ իրավաչափությունը, ըստ Ընկերության, կայանում է հետևյալում.

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ընդհանուր գործերը վարելիս յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործել բոլոր մասնակիցների անունից, եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված չէ, որ գործերը վարում են համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակիցներ կամ բոլորը համատեղ:

Այսինքն, Ընթացակարգի մասնակցի անվան մեջ կոնսորցիումի անդամի անվան բացակայությունը Օրենքի խախտում չէ և հայտի մերժման հիմք չէ, ինչպես նաև Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգին մասնակցելու դիմումի մեջ հստակ երևում է կոնսորցիումի մասնակից անդամի անվանումը, ՀՎՀՀ-ն, ինչպես նաև ստորագրված է կոնսորցիումի անդամի կողմից:

Բացի այդ, 01.06.2016թ. գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի «բ» ենթակետով չափաբաժին թիվ 4-ի և թիվ 6-ի համար գնահատող հանձնաժողովը ընդունել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի և «Վեկ ստրոյ» ՍՊԸ-ի կոնսորցիումի փաստը:

Ըստ Ընկերության՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները սուբյեկտիվ են, որի արդյունքում խախտվել են Օրենքով երաշխավորված մրցակցության, հավասարության սկզբունքները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 45-րդ և 48-րդ հոդվածներով՝ Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) խնդրել է մասնակի դադարեցնել «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2016թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «բ» ենթակետով և 3-րդ կետի «բ» և «գ» ենթակետերով կայացված՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին չբավարարող ճանաչելու մասին որոշումը:

Միաժամանակ Ընկերությունը բողոքով խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին որոշումը, որը ԳԲԽ-70/16 բողոքը քննող հանձնաժողովի 29.06.2016թ. միջանկյալ որոշմամբ մերժվել է՝ առարկայազուրկ լինելու պատճառով:

Ընկերությունը 23.06.2016թ. գրություն է ներկայացրել Խորհրդին և խնդրել վերջինիս բողոքը քննելիս՝ չանդրադառնալ Ընթացակարգի 4-րդ չափաբաժնին, անհետևանք թողնել 4-րդ չափաբաժնի մասով բողոքը և չկիրառել ժամանակավոր միջոց և չկասեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-70/16 բողոքը քննող հանձնաժողովի 24.06.2016թ. ժամը 17:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը Կենտրոնին ուղղված 28.06.2016թ. թիվ 09/15.3/8280-16 գրությամբ ներկայացրել է «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/1» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Կարգի 45-րդ կետով սահմանված է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընկերության (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))-ի անվանման մեջ նշված չէ կոնսորցիումի մյուս անդամի անվանումը, ինչը թույլ չի տալիս

տեսնել կոնսորցիումի կողմ հանդիսացող մյուս անդամի անվանումը: Ընկերության հայտում ներառված չէ համատեղ գործունեության պայմանագիր, ինչը չի համապատասխանում Կարգի 35-րդ կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ, Ընթացակարգի հրավերի I մասի 4-րդ կետի 4.3 ենթակետի «է» պարբերությամբ, ինչպես նաև հրավերի II մասի 2-րդ կետի 2.2.9 ենթակետով սահմանված պահանջներին: Ընկերության հայտի գնահատման ժամանակ հնարավոր չէ կիրառել Կարգի 35-րդ կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի I մասի 7-րդ կետի 7.5.2 ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանված պահանջները: Ընկերության հայտի ապահովումը ներկայացվել, ստորագրվել և կնքվել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից, իսկ թիվ 3.5 հավելվածում ներառված աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությունը ներկայացվել է «Նոր-Էներջի» (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))-ի կողմից, մինչդեռ տվյալ հայտարարությունը ստորագրվել և կնքվել է միայն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից:

Պատվիրատուն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները իրավաչափ են և համապատասխանում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ Ընթացակարգի 1-5 չափաբաժինների մասով 21.06.2016թ. կնքվել են գնման պայմանագրեր և կնքված պայմանագրերի մասին հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում նախքան Ընկերության կողմից բողոքի ներկայացման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվելը:

Պատվիրատուի ներկայացուցիչը մասնակցելով ԳԲԽ-70/16 բողոքը քննող հանձնաժողովի 24.06.2016թ. ժամը 16:45 նիստին, առարկել է բողոքի դեմ:

3. ԳԲԽ-70/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-70/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար՝ Ա/Ճ Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-

Իրանի սահման կմ 343+300-կմ 347+500 հատվածների անցանելիության ապահովման, Ա/Ճ Մ-2-Երեվան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ 332+000-կմ 333+000 փլուզված հատվածի վերականգնման, Ա/Ճ մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ 79+000-կմ 96+400 ճանապարհահատվածի անցանելիության ապահովման, Ա/Ճ Մ-4, Երեվան-Սեվան-Ադրբեջանի սահման կմ 24+200-կմ 72+000 7 կմ հատվածի հիմնանորոգման, Ա/Ճ Մ-4, Երեվան-Սեվան-Ադրբեջանի սահման կմ 67+500 հեղեղված հատվածի հողային պաստառի վերականգնման, Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան կմ 8+100 հատվածի հողային պաստառի վերականգնման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/1» ծածկագրով բաց ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի I մասի 4-րդ կետի 4.3 ենթակետով պահանջվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

3. Ընթացակարգի հրավերի II մասի 2-րդ կետի 2.2.9 ենթակետով պահանջվել է, որ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), ***ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:***

4. «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի և «Վեկ ստրոյ» ՍՊԸ-ի կոնսորցիումը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար վերը նշված շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/1» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել՝ հայտում նշելով

«Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում)» անվանումը:

5. Ընթացակարգի մասնակցության հայտի 9-րդ հավելված հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնությունը, հաստատվել է միայն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից:

6. Մասնակցի կողմից հայտով համատեղ գործունեության պայմանագիր չի ներկայացվել:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.06.2016թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի «բ» ենթակետով կայացված որոշամբ մերժել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի հայտը՝ հետևյալ պատճառաբանությամբ. ««Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))-ի անվանման մեջ նշված չէ կոնսորցիումի մյուս անդամի անվանումը: Մասնակցի հայտում ներառված չէ համատեղ գործունեության պայմանագիր, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ, սույն ընթացակարգի հրավերի I մասի 4-րդ կետի 4.3 ենթակետի «է» պարբերությամբ, ինչպես նաև հրավերի II մասի 2-րդ կետի 2.2.9 ենթակետով սահմանված պահանջներին: Մասնակցի հայտի գնահատման ժամանակ հնարավոր չէ կիրառել Կարգի 35-րդ կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերությամբ և սույն ընթացակարգի հրավերի I մասի 7-րդ կետի7.5.2 ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանված պահանջները: Մասնակցի հայտի ապահովումը ներկայացվել, ստորագրվել և կնքվել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից, իսկ N 3.5 հավելվածում ներառված աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությունը ներկայացվել է «Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))-ի կողմից, մինչդեռ տվյալ հայտարարությունը ստորագրվել և կնքվել է միայն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից:

8. «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնին է ներկայացվել «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ-ի միջև 30.05.2016թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիրը:

4. ԳԲԽ-70/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 20.06.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 28.06.2016թ. թիվ 09/15.3/8280-16 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ ***հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 35-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝

Մասնակիցը կարող է գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Ընթացակարգի հրավերի մաս I 7-րդ կետի 7.5.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

2) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

3) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Հրավերի II մասի 2-րդ կետի 2.2.9 ենթակետով պահանջվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), ***ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:***

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար՝ Ա/Ճ Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ 343+300-կմ 347+500 հատվածների անցանելիության ապահովման, Ա/Ճ Մ-2-Երեվան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ 332+000-կմ 333+000 փլուզված հատվածի վերականգնման, Ա/Ճ մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ 79+000-կմ 96+400 ճանապարհահատվածի անցանելիության ապահովման, Ա/Ճ Մ-4, Երեվան-Սեվան-Ադրբեջանի սահման կմ 24+200-կմ 72+000 7 կմ հատվածի հիմնանորոգման, Ա/Ճ Մ-4, Երեվան-Սեվան-Ադրբեջանի սահման կմ 67+500 հեղեղված հատվածի հողային պաստառի վերականգնման, Հ-28, Ջրառատ-Մեղրաձոր-Հանքավան կմ 8+100 հատվածի հողային պաստառի վերականգնման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/1» ծածկագրով բաց ընթացակարգ մասնակցելու նպատակով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ-ի կոնսորցիումը հայտ է ներկայացրել՝ հայտում նշելով «Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում)» անվանումը:

Ընթացակարգի մասնակցության հայտի 9-րդ հավելված հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնությունը, ***հաստատվել է միայն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.06.2016թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի «բ» ենթակետով կայացված որոշամբ մերժել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի հայտը՝ հետևյալ պատճառաբանությամբ. ««Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))-ի անվանման մեջ նշված չէ կոնսորցիումի մյուս անդամի անվանումը: Մասնակցի հայտում ներառված չէ համատեղ գործունեության պայմանագիր, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ, սույն ընթացակարգի հրավերի I մասի 4-րդ կետի 4.3 ենթակետի «է» պարբերությամբ, ինչպես նաև հրավերի II մասի 2-րդ կետի 2.2.9 ենթակետով սահմանված պահանջներին: Մասնակցի հայտի գնահատման ժամանակ հնարավոր չէ կիրառել Կարգի 35-րդ կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերությամբ և սույն

ընթացակարգի հրավերի I մասի 7-րդ կետի7.5.2 ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանված պահանջները: Մասնակցի հայտի ապահովումը ներկայացվել, ստորագրվել և կնքվել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից, իսկ N 3.5 հավելվածում ներառված աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությունը ներկայացվել է «Նոր-Էներջի» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում))-ի կողմից, մինչդեռ տվյալ հայտարարությունը ստորագրվել և կնքվել է միայն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***<u>բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան</u>, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Այսպիսով, բոլոր այն դեպքերում, երբ հայտի՝ հրավերի պահանջներին անհամապատասխանությունը <u>չի վերաբերում գնային առաջարկին և հայտի ապահովմանը,</u> ապա ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, հնարավորություն ընձեռնելով մասնակցին Կարգի 45-րդ կետով սահմանված կարգով շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության կողմից ներկայացված հայտը, պատճառաբանել է, որ հայտի ապահովումը ներկայացվել և կնքվել է միայն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի անունից:

Հրավերի II մասի 2-րդ կետի 2.2.9 ենթակետը սահմանում է, որ ***համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ***

որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:

Մինչդեռ Կենտրոնը արձանագրում է, որ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի թիվ 9 հավելված հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնությունը, ներկայացվել և կնքվել է միայն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից:

Կարգի 45-րդ կետը հնարավորություն է տալիս գնահատող հանձնաժողովին մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու առաջարկ ներկայացնել մասնակցին միայն այն դեպքերում, երբ նշված անհամապատասխանությունը կապված չէ գնային առաջարկի և (կամ) հայտի ապահովման հետ: Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովումը ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից չէր կարող կիրառվել Կարգի 45-րդ կետով նախատեսված հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ դրույթները:

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի և «ՎԵԿ ստրոյ» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը, գործել է իրավաչափ:

Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալը, Կենտրոնը գտնում է, որ Ընկերության կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 20.06.2016թ. ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ուստի առաջակում ենք «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 20.06.2016թ. ներկայացված բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-70/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան